

Բաֆֆու գաղափարական դասերը

Նստած եմ գրասեղանի առջև, թերթում եմ համակարգչային էջերը, ու հայացքս կանգ է առնում տողերիդ վրա. «... Բայց եթե մենք գործ չենք դնում Աստուծո՝ մեզ տված շնորհները, մեղավորը մենք ենք...»:

Անհագորեն սկսում եմ կարդալ ու կարդալ, և մտորումներիս հարցականների լաբիրինթոսում հանկարծ առկայծում է մի փարոս, որն ինձ առաջնորդում է դեպի նավահանգիստ: Այդ փարոսի լույսի մեջ ես պարզորոշ տեսնում եմ քո խրոխտ դեմքը՝ աչքերի խիստ ու խելացի արտահայտությամբ, որ ինձ է նայում ակնոցի տակից, լայն, բարձր ճակատով, թանձր հոնքերով, կարճ թավ մորուքով՝ հակված հաստակազմ գրքերի վրա: Խոհուն է հայացքդ, մռայլ: Բայց հանկարծ բարձրացնում ես գլուխդ, ու, թվում է, տեսնում ես ինձ՝ հարցական հայացքս հառած դեպի քեզ, և պայծառ ու իմաստուն մի ժպիտ լուսավորում է քո դեմքը: Թվում է՝ կարդում ես իմ անհանգիստ հայացքը, մոտենում ես, ձեռքդ դնում ուսիս, ու քո ժպիտի մեջ ես տեսնում եմ հավատ. դու հավատում ես ինձ՝ իմ երկրի ապագան կերտողիս:

Քեզնից հետո ահա անցել է ավելի քան մեկ ու կես դար: Փոխվել են ժամանակները, կենսապայմանները: Թվում է՝ Խենթի երազն իրականություն է դարձել. ես այժմ սովորում եմ գեղեցիկ կահավորված, լուսավոր դասասենյակներում: Այսօր ես չունեմ հագուստի և սննդի խնդիր: Ես և իմ դասընկերները կոկիկ հագնված ենք: Հաճախում եմ ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորված դպրոց, որտեղ ինձ անվճար կրթում են փորձառու ուսուցիչներ: Հապա էլ ի՞նչ ունեմ մտածելու: Բայց թվում է՝ դու հասկանում ես իմ մտահոգությունների ու անհանգստությունների պատճառը: Այսօրվա դպրոցականն այլևս չունի այն պահանջները, որոնք ունեին քո ժամանակների սովորողները: Մենք այսօր ունենք գրքեր, տետրեր, աշխարհի հետ հաղորդակցվելու զանազան միջոցներ՝ սկսած թերթերից, հեռախոսներից մինչև համացանց, որի շնորհիվ մեր բազմազբաղ ուղեղներն են ներհոսում տեղեկություններ ողջ աշխարհից: Բայց այսօրվա դպրոցականը, ուսանողը ևս բավարարված չէ իր կրթությունից, կյանքից. ինչո՞ւ: Իմ սերնդակիցներից յուրաքանչյուրին այսօր տանջում է անորոշությունը: Եվ այժմ, նայելով քո խաղաղ ու լուսավոր դեմքին, որ ժպտում է ինձ խաղաղ ժպիտով, մի տեսակ վստահություն է իջնում վրաս, ու գրասեղանիս առաջ նստած՝ թերթում եմ քո հսկայական ժառանգության էջերը՝ խոսելու քեզ հետ, նորից ու նորից առնելու քո իմաստուն դասերը, հարցերիս պատասխանները քո անմահ մտորումների մեջ փնտրելու: Քո երկերից հորդում է մեր ժողովրդի ազատասիրական ոգին:

Թերթում եմ քո գրվածքները, որոնցից այնքան բարոյական խրատներ եմ քաղում: Նրանց մեջ թաքնված է մեր ժողովրդի իմաստնությունը: Այսօր, երբ շատ արժեքներ խեղաթյուրված են, իմ սերունդն անհրաժեշտություն ունի անդրադառնալու քո դասերին: Դու ասում ես, որ մեծ առաքելություն ունի դպրոցը. «...Այստեղից պետք է գոյություն առնե և վերստեղծվի մեզ համար մի նոր հասարակություն և մի նոր կյանք»: Արդյոք լուծում է ազգի առաջ ծառացած խնդիրը մեր դպրոցը: Չէ՞ որ դպրոցի ուսերին ես դնում հայ կնոջ, հետևաբար հայ մայրերի արժեհամակարգի ձևավորման խնդիրը՝ ասելով՝ «Բարեկիրթ երեխաներ ստանալու համար նախ պետք է պատրաստել ուսյալ մայրեր: Բայց որտեղի՞ց պետք է ստանալ ուսյալ մայրեր: Դպրոցից... Որպես մի հասարակության, նույնպես և մի ամբողջ ազգի մեջ կրթության գործը հաջողված է համարվում այն ժամանակ միայն, երբ նրա կանայքը լուսավորված են»:

Դպրոցի վրա այսօր դրված են մեծ խնդիրներ, որոնցից թերևս ամենակարևորներից է ապագա հայ

մայրերի կրթության գործը: Բայց մտահոգությունը չափազանց մեծանում է, երբ տեսնում ես, որ ապագա մայրերի (և ոչ միայն) կողմնորոշումը Արևմուտքի կողմն է: Հայ երիտասարդներն այսօր ձգտում են նմանակելու ոչ միայն արևմտյան վարքուբարքը, բարոյական արժեքները, այլև լեզուն, մշակույթը: Այսօր հայ երիտասարդը հաճախ հայերեն խոսում է օտար մտածողությամբ ու շեշտադրությամբ, հաճախ գրում է լատինատառ՝ մոռացած մեր շքեղ տառերը: Եվ ոչ միայն դպրոցի, այլև ընտանիքի ուսերին է դրված կանխելու և վերահսկելու այս աղետալի երևույթները: Ընտանիքը... «Ընտանիքն է այն հողը, որի մեջ գոյություն է ստանում մանկուկը: ...Ընտանիքը երեխայի աշխարհն է, երեխան ներս է մտնում այս աշխարհում բնութենից բոլորովին մաքուր և անաղարտ կերպով ստեղծված: ...Ինչ տեսնում է երեխայի աչքը, ինչ որ լսում է նրա ականջը, նույնը կերպավորվում է նրա հոգվո մեջ, և նույնպիսի ձև են ստանում նրա մտավոր և բարոյական ուժերը»: Ժամանակակից հայ ընտանիքը, կարծում եմ, այն պարարտ հողը չէ, որից պիտի սնվի հայեցի մտածողություն ունեցող երեխա: Ինչո՞ւ: Մերօրյա ընտանիքներում հաճախ հնչող արտահայտություններից են «սա ապրելու երկիր չէ», «այստեղ ապագա չկա» և շատ նման մտքեր, որոնք սնում են հայ ծնված, սակայն օրեցօր Արևմուտքի ախտանիշներով վարակվող երեխային, և նա իր լուսավոր հայացքը հառում է հայոց աշխարհի սահմաններից դուրս:

Երգիծական մանրապատումներից մեկում՝ «Ազգասերում» դու նշում ես. «Կրթությունը պետք է սկսի ընտանիքից: Երեխայությունից պետք է մտցնել մանուկների մեջ սեր դեպի մայրենի լեզուն և ազգային ավանդույթները»: «Վերջապես ընտանեկան օջախի մեջ սրբագործվում է երեխան իր ազգային երկու ամենամեծ առանձնահատկություններով, որպիսին է լեզուն և կրոնը»: Իսկ ի՞նչ ունենք մենք այսօր. «երեխայությունից» մինչև չափահասությունը ընտանիքը ժամանակի հրամայականով երեխային մղում է ոչ թե դեպի մայրենի լեզվի, այլ օտար լեզվի կամ լեզուների իմացության: Հայ մանուկն այսօր օտար լեզվի միջոցով է հաղորդակցվում հայերենին (փոխանակ հակառակը լինելուն): Եվ ոչ թե հայկական երգն ու մշակույթն է ներթափանցում նրա մանկական անմեղ գիտակցության մեջ, այլ ուրիշինը՝ օտարինը: Մինչդեռ դու ասում ես, որ «Եթե կամենում ես ճանաչել նորա (ազգի) հոգին, կարդա նրա երգերը»: Այսօր մեր ականջներն ընկալում են օտար երգեր ու հնչողություններ, մեր ճաշակին ավելի մոտ են ռոքը, ռափսը, ռեպը, քան նրբահունչ ու մաքուր ազգայինը, կոմիտասյանը: Այստեղ էլ մեծ դեր ունեն դպրոցը, հեռուստատեսությունն ու մամուլը:

Քո ազգանվեր հոգին տեսնում էր ընթերցանության կարևորությունը մատաղ սերնդի հայեցի կրթության զարգացման գործում: Քո գրառումներում դու նշում ես. «Մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը»:

Միբելի՛ գրող, մեզանում քիչ չեն կարդացած և ուսյալ երիտասարդները: Մենք կարդում ենք, մտածում, վերլուծում: Սակայն մեզ նման «կարդացած» երիտասարդներից շատերի հայացքը, չգիտես ինչու, մեր երկրին ուղղված չէ: Իմ ցանկությունն այն է, որ հայ պատանին իր ապագան մեր հայրենքում տեսնի: Իսկ Արևմուտքը, ինչո՞ւ միայն Արևմուտքը... Ամբողջ աշխարհը հայոց հողից խլում է մեր լուսավոր երիտասարդներին, խոստանում բարեկեցիկ կյանք: Ու գնում են մեր ընթերցասեր ու մտածող երիտասարդները, գնում են՝ ծաղկեցնելու օտար տնտեսությունը, արվեստը, գիտությունը, սպորտը: Մեր մեջ պետք է արմատավորված լինի պետականամետ մտածողություն, ի սեր և ի շահ մեր երկրի գործելու մտածողությունը: Եվ միգուցե մեր միջից կհառնեն Դավիթ-Բեկի, Սամվելի, Մուշեղ Մամիկոնյանի, Խենթի, Խորենացու նման լուսավոր նվիրյալներ, որոնց համար ամենից նվիրական պարտքը կլինի հայրենիքին ծառայելը:

«Ուղեգրությունների» մեջ դու գրում ես. «...Նայելով Հայաստանի վանքերին և նրանց շրջապատող ժողովրդի վիճակին, բոլորովին հակառակ երևույթ ենք տեսնում. ժողովուրդը որքան մոտ է վանքին, այնքան ծույլ, տխմար է, որքան հեռանում է, այնքան թուլանում է վանքի վատ ազդեցությունը»:

Այսօր եկեղեցուն և վանքին մոտ կանգնած ժողովուրդը այլևս այն ժողովուրդը չէ, որ տառապում է ծուլության ախտանիշով, նա գիտի համախմբվել հավատի շուրջը, դառնալ զորավոր ուժ: Նրանք, ովքեր ունեն հայրենիքը, պատասխանատվությունը և հավատքը՝ որպես արժեհամակարգ, պատասխանատու են մեր երկրի, նրա սահմանների անառիկության, իրենց զավակների հայեցի կրթության ու դաստիարակության համար: Այստեղ է մեզ պետք պատմությունից դասեր քաղել: Եվ դու այս անգամ էլ քեզ հատուկ հեռատեսությամբ ու իմաստությամբ մեր հայացքը ուղղում ես դեպի պատմության դասերը: Քո պատմավեպերը պատմությունից դասեր քաղելու հրաշալի օրինակներ են, որոնցով կրթվել ու շարունակում են կրթվել սերունդներ: Պատմությունը ճանաչելով՝ դու մղում ես մեզ ճանաչելու հայրենիքը. «Ով չի ճանաչում հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան»:

Այո՛, սիրելի՛ գրող, տեսնո՞ւմ ես, ես էլ այսօր մտորում եմ քեզ պես իմ երկրի և իմ սերնդի ապագայի մասին: Եվ ի՛նչ իմանար քո լուսավոր միտքը, որ այսօր, թեև հայ մանուկը հաճախում է հայկական դպրոց, մաքուր ու կոկիկ հագնված՝ նստած է լուսավոր դասասենյակում, նրա առջև ևս ծառանում են խնդիրներ, որոնք սպասում են լուծումների, որպեսզի հանկարծ չվտանգվի մեր լուսավոր ապագայի հեռանկարը:

Հիմա էլ նայում եմ հայացքիդ: Ժպտում ես, բայց խորհրդավոր ու թախծոտ ժպիտով: Գուցե վստահ ես, որ կգա մի օր, երբ իրականություն կդառնան քո երազանքները՝ կապված հզոր ազգ ու երկիր ունենալու հետ: Դա նաև մեր երազանքն է, որն իրականություն դարձնելու համար մի ամբողջ սերնդի ու ժողովրդի պիտի արաջնորդեն քո իմաստուն մտքերը:

Գրականության ցանկ

- Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, Սովետական գրող, 1983թ.
- Մամվելյան Խ., Բաֆֆին ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1986թ.
- Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Հայ դասական գրողներ, Բաֆֆի, Զանգակ, 1997թ.